## 116. ԼԻՍՆՅԱԿՆ ՈՒ ՐԵՔՆԱԿԸ

*Ժամանակին մի թաքավըրեր ա ըլել։ Էս թաքավըրերին մի տղա ա ունենըմ։ Օրերի մի օր սա̈ էրազըմ տըենըմ ա, վըեր լիսնյակն ու րեքնակը իրար կյլոխ տվին։ Սա̈ վըեր ա կենըմ, էտ էրազը հորնումորը պատմըմ ա։*

*Հերը ասըմ ա. «Ուրեմը տու մտկըմըտ տրել ես՝ թաքավըրեր տա̈ռնա̈ս, մընենք էլ քեզ կյլոխ տանք»։ Սա̈ ուզըմ ա տղին ռադ անի։ Մըերը կլխի ա ըլըմ, պիտըմ ա, ծըեռաց յաշիկ ա շինիլ տալի, մեչը վըեսկին լցնըմ, տղին միչին տնըմ, չորս զոլը լա̈վ սարքըմ ու օքմու շա̈լա̈կը տալի, ասըմ ա. «Տարե՛ք, ծովը րցեցեք»։ Էտ ըեխին տանըմ են, քցըմ ծովը։ Էքսը հերը տղին ման ա կյա̈լի, քթնըմ չի, մորը հրցնըմ ա։ Ասըմ ա. «Ես էլ չեմ գյիդըմ, թե վերդի ա քյա̈ցել»։*

*Էտ ըեխեն ծովի վրա, յաշկի միչին, մի շա̈փա̈թ լըղըմ ա։ Մի օր էլ լափուն սրա̈ն քցըմ ա ցամաքը։ Մի թոռչի քթնըմ ա տանըմ, պահըմ։ Տրա̈ վըեսկովը էտ ըեխին էլ շկոլ ա ղրգյմ։ Կարթըմ ա, սըվերըմ, տա̈ռնըմ ա շատ իմաստուն մարթ։*

*Օրերի մի օր՝ իրեք ակռավ կյա̈լիս են էտ երգրի թաքավըրերի պալատի կլխին «կը՛ռ, կը՛ռ» կըռկռցնըմ, պտիտ կյա̈լի։ Էս թաքավըրերը ինչքան խուրկ ա տալի, ըլըմ չի։ Ըլետ կյա̈լիս են ու կըռկռցնըմ։*

*Թաքավըրերը հրաման ա տալի, ասըմ ա. «Ով ասի՝ էս ակռավնին ինձա̈նից ի՞նչ են ուզըմ՝ նրա̈ն շատ վըեսկի կտամ»։*

*Ինչքան օքմենի են կյա̈լի, կարըմ չեն գյիդենան, թե ակ-*

դավնին խի՞ են կըոցնըմ։ Էտ տղեն էտ պանը մանըմ ա, ասըմ ա. —Ես էլ գեմ քյնալ, թա՛լի ես ասըմ եմ։

Վեր ա կենըմ, կլա՛լի ըտի, ակռավներին մտիկ ա անըմ, մըտիկ, կլալիս ա, ասըմ ա. «Թաքավըրբըը ապրած կենա, ես կասեմ»։ Ասըմ ա. «Ասա՛, տղա ջան, եթե խելքի կտրած պա՛ն ասիս, քեզ մեծ պաշտոնի կտնեմ»։ Ասըմ ա. «Թաքավըրբըը ապրած կենա, էն դըռադի ակռավը մարին ա, մի ծու ա ածել ու քրախել. բլնադել, էս դըռադինն էլ վըռեցակն ա, վրեն նստել ա ճուտ հանել. կերակրել, մեծցրել։ Էտ մեջտեղինը իրա պահած մեծացրած ճուտն ա. Հմի մարին եկել ա, ասըմ ա. «Ճուտը ի՛մն ա, ինձի»։ Վըռեցակն էլ տալիս չի, ասըմ ա. «Ի՛մն ա»։ Տրա մհար էլ եկել են քու կուշտը, ասըմ են. «Տու մեր դատը կտրի»։ Թաքավըրբըը տղին ասըմ ա. «Տղա՛, տու կարա՞ս դատը կտրես»։ Ասըմ ա. «Կարամ. խի՞ չեմ կարա»։ Ասըմ ա. «Դե՛, կտրի»։ Ասըմ ա. «Թաքավըրբըը ապրած կենա, ծո՛ւն ածիլը հեշտ ա, ամենն էլ կածեն, ճուտ պահիլ մեծցնելն ա տժա՛ր. նրա՛ն մի վեսկի կտամ, կասեմ՝ առ քյնա քեզ հալալ ըլի»։

Թաքավըրըրի ըխեր կյա՛լիս ա էս տղի խոլոք խոսկերիցը, ասըմ ա. «Տղա՛, ես էս ա պռտվել եմ, ըսօրից եղը քեզ տնըմ եմ իմ տեղը թաքավըրբեր, երղյիրը տո՛ւ կառավարի»։

Էս տղեն նստըմ ա թաքավըրբեր ու էտ քաղաքըմը ծրի ճաշա՛րան ա դնըմ տալի, ասըմ ա. «Ով կյա՛ ճա՛շի, փող չի ուզեք. մընակ ասկն ու անըմը կրկյրեք, կպիրեք իմ կուշտը»։

Տհենց էլ ճաշարանըմը չիմն էլ կյա՛լիս են ուտըմ, քյնըմ։

Էս տղի հերնումերը, ադին ճուրը քցիլուց եդը, օր-օրի վրա՛ սխրատանըմ են, իրան էլ թաքավըրբերութինից քցըմ են, էլ ուտիլու դատ չեն ունենըմ։

Տհա՛նը մա՛նըմ են, վրեր իրանց հրեվան թաքավըրբերի երգիրը յա՛վն ա ու ծրի ճաշա՛րան կա։ Մտն կյա՛լով կյալիս են էտ ճաշա՛րանը քթնըմ ու բարի ճաշ են ուտըմ։ Սհա՛նց անըմ, ասկանըմը կյըրըմ են, տալի թաքավըրբերին։

Սա՛, վըրը կարթըմ ա, տըենըմ ա իրան հերնըմըբերն են։ Կյա՛լիս ա էտ ճաշա՛րանի մեծին ասըմ ա. «Վրեր էս երկու հուրին կյա՛ն ճաշիլու, էլ հիլ չի անեք քյնա՛ն»։

Էրսը, վըրը սհա՛նք ըլետ կյա՛լիս են ճաշիլու, սհա՛նց պիրըմ են թաքավըրբերի կուշտը։ Թաքավըրբըը մեծ քյեփ ա սարքըմ, կյա՛լիս ա ըտի։

Չիմն էլ վրեր են կենըմ, կյլո՛խ տալի, հլե տհա՛նք էլ են ու-

գըմ կյլո̄խ տան, տղեն հիլ չի անըմ, կյա̄լիս ա, ասըմ. «Տո̄ւք ըն-
խա ունեցե՞լ եք»: Ասըմ են. «Ունեցել ենք»: Ասըմ ա. «Վըեր տե-
նաք, կճնանչե՞ք»: Ասըմ են. «Չէ́, ախր շատ պո̄ւճո̄ւրուց ենք կորց-
րել»:

Սա̄ հլե իրան մտանին շհանց ա տալի: Հերնումերը սրա̄ ճտո̄վն են ընգյնըմ, փթաթվըմ: Տղեն կանչըմ ա սաղ քաղաքի մեծամեծներին, ուտըմ, խմըմ, քյեփ են անըմ ու հիլ չի անըմ հորնումուրը ո̈ւրո̈ւշ տըեղ քյնան: Պահըմ ա իրան քշտին: Սհա̄նք պիրըմ են իրանց տղի̄ն փսակըմ, հրսանիք անըմ:

Իրանք հասնըմ են իրանց մուրազին, տո̈ւք էլ հասնեք ծըեր մուրազին:

